

Դաշնակիցների պատասխանը

Ռիչարդ Հովհաննիսյան

Առաջարկ

Հայոց և Մերձավոր Արևելքի պատմության պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի (ԼԱԿՀ) ֆոն Գրյունեբաումի անվան Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի պաշտոնակից տնօրենն է: Նա դասավանդում է հայոց պատմություն ԼԱԿՀ-ի բարձր կուրսեցիներին և ասպիրանտներին:

Լինելով խարբերոցի ծնողների զավակ, ծնվել է 1932-ին, ապրել, կրթություն է ստացել ու հաստատվել Կալիֆոռնիայի նահանգում, ու Հովհաննիսյան-գիտնականի գրչի տակից դուրս են եկել «Հայաստանը անկախության ճանապարհին», «Հայաստանի Հանրապետությունը», «Հայերի ողջակիզումը», «Հայոց պատկերը պատմության և գրականության մեջ», «Հայերի ցեղա- սպանությունը հեռանկարում» աշխատությունները, ինչպես նաև բազմաթիվ հոդվածներ:

Ռ.Հովհաննիսյանը կատարում է բազմաձևավալ հայանպաստ կազմակերպչական աշխատանք, նա Ամերիկայի Հայկական համագումարի և հայագիտության ընկերության հիմնադիրներից է և Կալիֆոռնիայի նահանգի ներկայացուցիչը ԱՄՆ-ի Բարձրագույն կրթության արևմտյան միջնահանգային հանձնաժողովում:

Պրոֆ.Ռ.Հովհաննիսյանը համառոտն պայքարում է միջազգային և ամերիկյան հասարակության կողմից հայերի ցեղասպանության ճանաչման համար: Նա «Ընդդեմ պատմությանը և մեզ» կազմակերպության, բնաջնջման և ցեղասպանության հարցերի միջազգային ինստիտուտի, միջազգային աշխրջության և Հայկական ճարտարապետության հետազոտման կազմակերպության տնօրենների խորհուրդների անդամ է, «Արմինիեն Ռեվյու», «Արարատ» ու «Ջորնել ֆոր զր Սոսանթի ֆոր Արմինիեն Ստադիո» ամսագրերի խմբագրական հանձնաժողովների անդամ:

Վաստակաշատ գիտնականը ս.թ. փետրվարին միաձայն ընտրվեց Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Սույն թարգմանությունը ներկայացնում է ակադամիկոս Ռ.Հովհաննիսյանի մեծարժեք «Հայաստանի Հանրապետության» առաջին հատորից հայ պետականության քաղաքական պատմության որոշ էջերը: Տվյալ դեպքում չեն ներկայացվում հատորում պարունակվող աղբյուրագիտական հղումները, բա- ցառությամբ նրանց, որոնք անհրաժեշտ են բնագիրը լիարժեք ըմբռնելու հա- մար: Ելնելով աշխատության բարձր գիտական մակարդակից և խորհրդահայ պատմագիտության մեջ մեր պետականության սակավ լուսաբանման իրողու- թյունից, ընթերցողին ենք ներկայացնում «Դաշնակիցների պատասխանը» գլխի թարգմանությունը: Հուսով ենք, որ այն հետաքրքրությամբ կընդունվի և մեզ խորհելու առիթ կտա:

Փարիզի հաշտության կոնֆերանսի առաջին փուլն ավարտվեց 1919 թ. հունիսի 28-ին, երբ կործանված գերմանական կայսրության վզին փաթաթվեց Վերսալի պայմանագիրը: Թեև եվրոպական գործերն և Ազգերի Լիգայի հիմնումը այդ նախնական շրջանի ամբողջ ընթացքում խաղաղարարների ուշադրության կենտրոնում էին, այդուհանդերձ, Արևելյան

հարցը շիկանում էր անմիջականորեն մակերևույթի տակ ու ժամանակ առ ժամանակ իր հան- գամանքներով հանդերձ, ժայթքում էր ու դառնում առօրյա քննարկման ա- ռարկա: Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբար-փաշան, որոնք արմատապես հակադրվում էին եվրոպական պայմանագրերը ստորագրելուց հետո թուր- քական կարգավորմանն անդրադառնալու Դաշնակիցների պաշտոնական հայ- տարարություններին, համառորեն ձգտում էին համաշխարհային կառավա- ռողներից հասնել. 1) ճանաչել Հայաստանի Հանրապետությունը, 2) հայրե- մադարձել հայ գաղթականներին ու թուրքական կայսրությունից վտարել մու- սուլման վերաբնակիչներին, 3) ռազմագրավել Թուրքահայաստանը, և 4) ան- հապաղ Հայաստանի համար սահմանել մանդատավոր ազգի կարգավիճակ: Յուրաքանչյուր դեպքում Փարիզում պատասխանը կամ բացասական էր, կամ անորոշ: Միացյալ Նահանգներն ու Դաշնակիցները վերջին հաշվով միա- կարծիք էին ծովից ծով Հայաստանի ստեղծման ցանկալիության հարցում, բայց ոչ ոք չէր ուզում անհրաժեշտ միջոցներ ապահովել այդ զգացումը ի- րականություն դարձնելու նպատակով:

Ճանաչումը եվ աջակցությունը

Հայաստանի Հանրապետության ճանաչումն արագացվում էր հայա- սերների կողմից: Սկսած 1918 թվականից Ավետիս Ահարոնյանը պարզապես տվյալ պահանջը դարձրեց պաշտոնական: Հաշտության կոնֆերանսին, պե- տությունների ղեկավարներին ու տարբեր պատվիրակություններին հասցե- ազրած միջնորդագրերում նա, որպես ճանաչման հիմնավորում, հիշատակում էր Հայաստանի գոհերն ու հայերի հերոսությունը: Ռուսահայաստանում ստեղծված հանրապետությունը պետք է միջուկ ծառայի ապագա անկախ Հայաստանի համար, պնդում էր ինքը: Ծաբաթները ամիսներ դառնալու համեմատ խնդրանքը վերանեց անհետաձգելի պահանջի: Ճանաչման հա- մաձայնություն չտալը համաշխարհային տերությունների կողմից, բողոքում էր Ահարոնյանը, Հայաստանին զրկում է հույժ անհրաժեշտ փոխառությունները տեղաբաշխելու հնարավորությունից, ու համարձակություն է տալիս շատ ուժերի, որոնք դավադրություն են կազմակերպում նորաստեղծ հանրապե- տությունը կործանելու նպատակով: Նրա հուշագրերում, որոնք շուտով դար- ձան անհուսալիորեն միանման, Ահարոնյանը գանգատվում էր Լլոյդ Ջորջին, Կլեմանսոյին, Վիլսոնին, Բալֆորին, Պիշոնին, Լանսինգին և ուրիշ նշանավոր պատգամավորներին, որ անցնող յուրաքանչյուր օրը գոհերի թիվը ավելացնում է ևս երկու հազարով, և որ Հայաստանը դառնում է զանգվածային գերեզման, թեև նույնիսկ Հաշտության կոնֆերանսի անունից հասարակ հռչակագիրը նրան հնարավորություն կտար պայմանավորվել կենսականորեն անհրաժեշտ սննդի, հագուստի և դեղորայքի հարցերի շուրջ:

Հայասիրական ընկերությունները Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Շվեյցարիայում, Դանիայում ու հատկապես Միացյալ Նա- հանգներում պաշտպանում էին Հայաստանի ձգտումները: Հայաստանի ան- կախության ամերիկյան կոմիտեն քննարկման ներկայացրեց միջնորդագրեր, որոնցում կար հազար այն անձանց անունները, որոնք պաշտպանում էին Երևանում առկա կառավարության ճանաչումը: Նույնիսկ երբ Հաշտության կոնֆերանսը սկսեց իր գործունեությունը, 25 նատանգապետեր բարձրաձայն հայտնեցին «իր պատմական սահմաններում» Հայաստանի վերականգնման հույսը, մի

տեսակետ, որը շարունակ կրկնում էին հարյուրավոր ամերիկացի հոգեվորականներ, նրանց միջնորդագրերում: 1919 թվականի ապրիլին Փարիզում ամերիկյան պատվիրակության մի քանի խորհրդականներ հանգեցին ճանաչմանը հավանություն տալուն, որ Հայաստանի համար ապահովվի նպաստավոր միջազգային դրություն, 20 մլն. դոլլարի փոխառությունը տեղաբաշխելու համար: Ճանաչման հարցն առաջ էին քաշել նաև կոմիտեի գործադիր անդամներ Ջեյմս Վ.Ջերարդը, Բիլվելնդ Գ.Դոջը և Վիլյամ Ջեմինգս Բրայանը, նախագահ Վիլսոնին հղած իրենց հեռագրում: Եռյակն այնուհետև Միացյալ Նահանգներին համոզում էր ինքնապաշտպանության համար Հայաստանն ապահովել զենքով ու զինամթերքով: Հունիսի սկզբներին նախագահ Վիլսոնը, որի անձնական զգացումները պարզորոշ համընկնում էին նման- օրինակ հայացքներին, անտարակույս հուզված էր երեսուն նահանգապետերի կոչով, որոնք հարցափորձ էին անում հայկական կառավարությունը փաստացի կերպով ճանաչելու մասին, այն հաշվով, որ «այդ համարձակ քրիստոնյա հայ ազգի ներկայացուցիչները կարողանային մասնակցել հաշտության կոնֆերանսին այն ժամանակ, երբ նրանց հարցը դրվի քննարկմանը»: Ծնշվելով բարդությունների անցանկալի բեռից, Վիլսոնը ստիպված էր պատասխանել, որ Հայաստանի հարցը միակը չէ, և որ ամենաոճվարը նմանօրինակ իրավիճակների վերաբերյալ տարբեր կերպ բանակցություններ վարելն է: Այնուամենայնիվ, նա խոստացավ հնարավոր ամեն ինչ անել «Հայաստանի բարօրության համար»:

Այն փաստը, որ Հայաստանի Հանրապետությունն ստեղծվել էր նախքինում ռուսաստանյան կայսրության մեջ մտնող տարածքում, գլխավոր խոչընդոտն էր ճանաչման համար: Պատվիրակության հունիսի 7-ի վավերագրում ռեզիմնալ խորհրդական Վիլյամ Լ.Վեստերմանը պնդում էր, թե քանի որ ձևական ճանաչումը, որն ինքը վաղուց պաշտպանում էր, ուղղակի հակասում է եվրոպական Դաշնակիցների քաղաքականությանը, նա իրեն պարտավոր է զգում պետական քարտուղար Լանսինգին առաջարկել բացատրել Ահարոնյանին, որ վեճի ամբողջ առարկան պետք է ամբողջովին հետաձգվի թուրքական կարգավորումից հետո: Այդպիսի ընթացակարգը հնարավորություն կընձեռներ խուսափել ռուսաստանյան «դեմոկրատական տարրերի» հետ հակամարտությունից: Վերջիններս վայելում էին Դաշնակիցների բարոյական, նյութական ու Ֆիզիկական աջակցությունը: Չքողարկելով անձնական համակրանքը, Վեստերմանն առաջարկում էր, որ ճանաչման որոշմանը սպասող Հայաստանին ցուցաբերվի հումանիտար օգնություն: Ըստ երևույթին, հարցն արդեն փակվեց հունիսի 5-ին, երբ նախագահ Վիլսոնը հրահանգեց Լանսինգին հայկական պատվիրակությանը հաղորդել իր խորին ափսոսանքը, որ առկա պայմանները խոչընդոտում են ճանաչմանը ընթացիկ պահին: Տերություններից ոչ մեկը 1919 թվականին չէր ցանկանում նույնիսկ բարոյապես մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտոնական ճանաչմանը:

Ինչպես հույս ուներ Վեստերմանը, ամերիկյան բարեգործական օգնությունը Հայաստանին, իրոք տևեց մի ամբողջ տարի: 1919 թ. ապրիլին Ահարոնյանն ու Նուբարը պայմանավորվեցին օգնության պաշտոնական անձանց՝ Հերբերտ Հուվերի և Ռոբերտ Տաֆտի հետ, որոնց միջոցով Հայաստանին տրվեց 5.000 տոննա ցորեն՝ հնարավորության դեպքում այն ավելացնելու պայմանով: Մինչև ամռան վերջը ամերիկյան վարչակազմը ավելի քան 50 հազար տոննա պարենի օգնություն ցույց տվեց հայերին: Ահարոնյանը փորձեց նաև տարբեր մթերքներ ու հանդերձանք ապահովել Եվրոպայում ամերիկյան ռազմարշավային ուժերի պահեստներից, սակայն մի-

ջազգային ճանաչման և օտարերկրյա վստահության պակասի պատճառով Հայաստանին չհաջողվեց դրանք ձեռք բերել: Ամերիկյան մարդասիրությունը մեղմացնում էր Հայաստանի տառապանքները, սակայն այս գրկանքների աղբյուրը չէր կարող կտրվել այնքան ժամանակ, քանի դեռ գաղթականները չէին հայրենադարձվել: Ահարոնյանի պատվիրակությունը Փարիզի հաշտության կոնֆերանսի առաջին շրջանի ամբողջ ընթացքում դիմում էր այդ պրոբլեմին:

Հայ գաղթականներն ու մահմեդացի վերաբնակիչները

Անդրկովկասում կես միլիոն գաղթականների կուտակումը անարդյունք դարձրեց վերականգնման գրեթե բոլոր հայկական ծրագրերը: Կովկասում Դաշնակիցները և ամերիկյան ներկայացուցիչները հաղորդեցին, որ այնքան ժամանակ, քանի դեռ կա գաղթականների ճգնաժամը, և՛ թուրքիայերը, և՛ տեղի ռուսահայերը դատապարտված կլինեն մշտական տառապանքների:

Մինևույն ժամանակ Ավետիս Ահարոնյանը, սկսած 1919 թ. փետրվարի 15-ից, մի շարք հուշագրերում ընդգծում էր ժամանակի գործոնը ու Փարիզի հաշտության կոնֆերանսին նախազգուշացնում, որ գաղթականների զանգ-վածները կգոհվեն, եթե նրանց ավելի երկար ժամանակ մերժեն վերադառնալ հայրենի օջախները: Շատ կարևոր է, պնդում էր նա, վերստին վառել 200 հազար տների օջախները ցանքսից առաջ: Ահարոնյանը մարտին Հաշտության կոնֆերանսի նախագահ Կլեմանտյոն և արտաքին գործերի նախարարներ Պիշոնին, Բալֆուրին, Սոնինոյին ու Լանսինգին գրեց, թերազգնահատելով այն փաստը, որ թուրքիայում Դաշնակիցների հաղթանակի հետևանքով առաջացած տագնապը շատ կարճատև էր, նույնիսկ չնայած այն բանին, որ օսմանյան կայսրությունը վաղուց արդեն անձնատուր եղավ, թուրքահայաստանը դեռ մարդասպանների ձեռքին տառապում էր, գաղթա-կաններին չէին թողնում վերադառնալ իրենց գյուղերը, նրանք մեռնում էին հյուծվածությունից ու հիվանդություններից սահմանի ամբողջ երկայնքով, իսկ բազում քրիստոնյա կանայք ու երեխաներ մնում էին հարեմների կալա-նավորներ: Երիտթուրքերի և նրանց հետևողների համար շատ ձեռնատու էր, որ Դաշնակիցները հեռացել են Հայաստանից: Նախազգուշացնելով, որ Հայաստանի ավերումը լուրջ վտանգի առաջ կկանգնեցներ հենց հաղթող տերություններին, Ահարոնյանը պահանջում էր Կովկասից թուրքական զորքերին դուրս մղելու արագ գործողություններ ձեռնարկել, թուրքահայաստանի ռազմագրավման հրահանգ տալ ու հնարավոր դարձնել բոլոր հայ գաղթականների անվտանգ տունդարձը:

Այն նամակները, որոնք Փարիզ էին ուղարկում Կոստանդնուպոլսում գտնվող դաշնակից ու հայ պաշտոնական անձինք, վստահություն էին առաջացնում Ահարոնյանի առաջ քաշած մեղադրանքների նկատմամբ: Արդեն 1919 թ. հունվարին լուրեր են հասել, որ Փոքր Ասիայի մերձակա շրջաններում գտնվող իրենց տները վերադառնալ պահանջող հայ գաղթականները հետ են ուղարկվել կամ ոչնչացվել, որ մուսուլման տնային տնտեսությունների հայ կանայք վախենում էին երևալ Դաշնակիցների տեսուչների առաջ, իսկ Ա-նատոլիայում իթթիհադի առավել կատաղած հետևորդները սպառնում էին շարունակել հայերի կոտորածը, «որ ոչ մեկը ողջ չմնար բողոքելու»: Ա-մերիկյան հատուկ լիազոր Լյուիս Հեկը

նախագրու շարունակում էր, որ ներքին նահանգներում «պայմանները մշտապես դառնում են հետզհետե վատթար բոլոր առումներով, որ որոշ պաշտոնական անձինք, որոնք մեղավոր են ամենավատթար գազանությունների և բռնագաղթի համար, դեռևս պահ- պանում են իրենց պաշտոնները, որ մահմեդադարի բնակչությունը, ինչպես միշտ, մեծամիտ է, չի գիտակցում պարտությունը, որովհետև չի բավականացնում ուժի ցուցադրումը Դաշնակիցների կողմից, որ շատ քաղաքատարկյալներ չեն ազատվել հակառակ ընդհանուր ներումի, ...որ կառավարության ու հասարակական կարգի թուլության առկայությամբ պահպանվում է հետագա տեղական կամայականության հնարավորությունը»: Մեկ շաբաթ հետո բրի- տանական գերագույն կոմիսարի օգնական, դերժովակալ Ռիչարդ Վեբը հաղորդում էր բարելավումների բացակայության մասին: «Թուրքիայի ներքին նահանգներում անվտանգության ու կարգուկանոնի բացակայությունը սովորական է համարվում», - ընդգծում էր նա. գյուղական վայրերում տեղի ունեցող ինքնապաշտպանության ակտիվները շարունակում էին նոր գազանություններ կատարել: Նման անիշխանության պատճառով Մերձավոր Արևելքում դաշնակցային պաշտոնյաները փորձում էին կասեցնել Փոքր Ասիայում բռնագաղթից հետո ողջ մնացած հայերի «ժամանակից շուտ» հայրենադարձությունը, սակայն բոլոր նմանօրինակ փորձերը ապարդյուն էին, որովհետև, բրիտանացի թղթակիցներից մեկի բնութագրմամբ «հայերի մոտ տան զգացումը շատ ամուր է»: 1919 թ. ապրիլի 1-ին օսմանյան կայսրությունում առաքելական, բողոքական ու հռոմեական կաթոլիկ հայկական համայնքների ղեկավարները բողոք հայտնեցին հայրենի գյուղերը վերադառնալու ճանապարհին գաղթա- կանների սպանության առթիվ, ու քանի որ Օսմանյան կայսրությունը ոչ մի փորձ չէր ձեռնարկում վերականգնելու կարգ ու կանոնը, Դաշնակից երկրներին պարտավորեցնում էին միջամտել:

Մայիսի 9-ին Ահարոնյանը կրկին գանգատով դիմեց Հաշտության կոմիտեին: Խիստ հիասթափված տոնով նա գրում էր, որ «այն ժամանակ, երբ քաղաքակիրթ աշխարհի մի կողմը վայելում է մոտալուտ խաղաղության հաճույքը, հայ ազգին թողնում են մեռնել միայնության մեջ: Չորս տարվա հերոսական զոհերից և անլուր տառապանքներից հետո հայ ժողովուրդը իրավունք ունի հուսալու, որ պատերազմի ավարտը իրեն թեթևություն կբերի: Անցել է վեց ամիս, իսկ մեր տառապանքները շարունակվում են նույն ուժով: Հայերի տները մինչև օրս գրավված են թուրքերի կողմից, մեր հարյուր հազարավոր գաղթականներ դեռևս կենտրոնացված են Թուրքահայաստանի սահմանագծին, մեռնելով սովից, համաճարակներից և անվերջ գրկանքներից»: Հայ ժողովուրդը, - վերջում գրում էր Ահարոնյանը, - այսօր կրկին դիմում է աշխարհի ղեկավարներին, որ «ճիշտ հայտնի աղետն» ու բարձրաձայն հռչակի, որ ինքը «բնավ չի հասկանում այդ շատ անարդարացի վարմունքը»:

Հունիսին մանրամասն տեղեկություններ ստանալով իր կառավարությունից, Ահարոնյանը բողոք հայտնեց, որ այն ժամանակ, երբ Սև ծովում բրիտանական բանակի հրամանատար գեներալ Միլնը շարունակում է արգելել թուրքահայերի տունդարձը, թուրքական պաշտոնական անձանց կողմից գործի դրված չարագուշակ մտադրությունը անարգել հաջողության է հասնում: Օսմանյան կառավարությունը, մեղադրում էր նա, օգտվեց Փարիզում Դաշնակիցների տատանումներից ու միասնության բացակայությունից, որ արագացնի Թուրքահայաստանի ավերված հողերը մուսուլման գաղութարար «մուհաջիրներով» բնակեցնելու նախագծի

իրականացումը: Մի շարք բրդա- կան ցեղեր, որոնց անունները, քանակը և առաջնորդները թվարկված են հու- շագրում, արդեն անցնում են այդ հողերը, իսկ Բալկանյան պետություններից ու Եվրոպական Թուրքիայից մուսուլման գաղթականների զանգվածային հոսքը էլ ավելի սպառնալի է: Ոչ պաշտոնական աղբյուրները բացահայտել են, որ օսմանյան կառավարությունը երեք միլիոն ոսկի ֆունտ է նախատեսում ա- րևելյան վիլայեթներում այդ վտարանդիական խմբերին բնակեցնելու համար: Հաղորդվում էր, որ միայն Ռումելիայից մոտ 200 հազար մուհաջիրներ գտնվում են Անկարայի և Կոնիայի շրջակայքում, ճանապարհին, որպեսզի ապօրի- նաբար զավթեն պատմական հայկական հողերը և այսպիսով ստեղծեն կատա- րված փաստի իրավիճակ, որն արդեն չի կարող փոխել Դաշնակիցների ոչ մի սպազա որոշում: Հատկապես անհասկանալի և անհանդուրժելի է, որ այդ խախտումները սկսել և ֆինանսավորում է թուրքական կառավարությունը, որն իբր Դաշնակից Տերությունների վերահսկողության տակ է, բողոքում էր հա- յկական պատմվիրակությունը: Հաղթական ազգերը պետք է առնվազն միջա- մտեին, որ վնդեն մուհաջիրներին ու կանխեն Հայաստանի հայաթափման մնացած բոլոր դավադրությունները: Կառավարությունից ոչ մեկը չի հա- մարձակվել դրական պատասխան տալ Հայաստանի կոչին, որովհետև մեծ արարքը կպահանջեր նաև ռազմական պարտավորություններ:

1919 թ. ընթացքում Փարիզում ստացված հաղորդումները ցույց են տվել, որ օսմանյան պաշտոնական անձանց կողմից հրահրվող մուսուլման վերա- բնակիչները շարունակում են հեղեղել ամայացած հայկական գյուղերը:

Հայասիրական ընկերությունների բարձրաձայն բողոքը դժվարին վիճակի մեջ գցեց խաղաղարարներին, բայց չվերացրեց նրանց անգործությունը Հայկական հարցում: Ավելին, կային ձայներ, որոնք չէին պաշտպանում Ա- վետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար-փաշայի ոչ պնդումները, ո՛չ կոչերը: Այնպիսի ազդեցիկ զինվորական իշխանությունների համար, ինչպիսիք էին բրիտանական կայսերական գլխավոր շտաբի պետ սեր Հենրի Գ.Վիլսոնը ու Կ.Պոլսում ամերիկյան ռազմածովային ուժերի ավագ սպա, դերժովակալ Մարկ Լ.Բրիստոլը,²³ հայկական պահանջները վրդովեցուցիչ էին: Հաշտության բա- նակցությունների ամերիկյան հանձնաժողովին ներկայացրած իր գեկուցա- գրերում Բրիստոլը մերժում էր հայերի հավակնություններն ու պնդում, թե ազգային համակարգի իմաստով չկա այնպիսի հասկացություն, ինչպիսին «Հայաստանն է»: Ընդգծելով, որ հայ ղեկավարները նրանց իսկ խոստո- վանությամբ ջանում էին գաղթականների հարցն օգտագործել քաղաքական նպատակների համար, նա հայիցում էր առանց համապահասխան օսմանյան իշխանությունների համաձայնության թուրքահայերի հայրենադարձության ամեն մի ծրագիր: Գործողության նկատմամբ թուրքական վերահսկողության միակ այլընտրանքը կլինեք արժարժվող ռեզիմնի տարածաշրջանի Դաշնա- կիցների զինված ուժերի կողմից: Ինչը ամենահավանական հնարավորությունն է:²⁴

Այն ժամանակ, երբ ի շահ հայ գաղթականների ոչ մի վճռական գործողություն չէր ձեռնարկվում, Միացյալ Նահանգների կառավարությունը բավարար չափով գործում էր, որպեսզի, թեև զգալի ուշացումով, հարցը դնի Հաշտության կոմիտեանսի սեղանին:

1919 թ. հուլիսի 5-ին ռուսական գործերով խորհրդական Վիլյամ Գ. Բակլերը առաջին անգամ ամերիկյան պատմվիրակությանն առաջարկեց, որ

Հաշտության կոնֆերանսը քննարկման ընդունի մինչև սեպտեմբերի մեկը «ինչ որ քանակությամբ» հայ գաղթականների հայրենադարձության իրագործելու լիարժեքությունը: Նույնիսկ մի քանի հազար գյուղացիների վերադարձը կնվազեցնեն սննդամթերքի պակասը հաջորդ տարում: Կովկասում բրիտանական սպաները, ենթադրել էր նա, կարող էին ղեկավարել այդ ամբողջ գործողությունը: Քանի որ տվյալ առաջարկությունները արվեցին այն բանից հետո, երբ նախագահ Վիլսոնը երկար ժամանակով մեկնեց Միացյալ Նահանգներ, արդեն պետական քարտուղար Լանսինգը հուլիսի 7-ին դարձավ այն մարդը, որը Հաշտության կոնֆերանսին առաջարկեց, որ միջոցներ ձեռնարկեն «վտարված հայ հողագործերին երկիր վերադարձնելու և նրանց հողից թուրք զավթիչներին արտաքսելու» վերաբերյալ:

Նա խնդրեց, որ գեներալ Միլնը իր նկատառումները ներկայացնի տարածաշրջանում գործող բրիտանական զինված ուժերի ժամանակավոր հսկողությամբ տվյալ ծրագրի իրականացման համար միջոցների մասին: Արտաքին գործերի նախարար Բալֆուրը իսկույն հրաժարվեց մասնակցության ցանկացած մտքից, որ հայրենադարձների պահպանությունը պետք է հանձնվի Մեծ Բրիտանիային: Ռոբերտ Լանսինգը որոշ չափով անհամոզիչ առարկեց, որ ինքը ցանկանում էր ընդամենը զեկուցագիր ստանալ Միլնից: Ռ՞վ կարող էր առարկել զեկուցագրի առթիվ: Պարզելով դա, սեծոյլան բանակի զխավոր հրամանատարից խորհուրդ խնդրելու մտադրությունը առանց դժվարությունների ընդունվեց, ու հարցը նույն սահունությամբ հետաձգվեց:

Թուրքահայաստանի առաջարկված ռազմագրավումը

Մուրթուսի զինադադարով պահանջվեց օսմանյան բանակի լայն գործարարություն: Սակայն Դաշնակիցները արդյունավետ միջոցներ չձեռնարկեցին, սահական ներքին նահանգներում համաձայնության ապահովման համար: Ամերիկացի հայտնի պատմաբանը հանգել է հետևյալ եզրակացությանը. «Թուրք-քիսի հետ զինադադարի ժամանակ Դաշնակիցները ավելի շուտ մտահոգված էին Ռուսաստանի ռազմավարական մուտքով, քան ներքին կարգուկանոնի խնդրով: Դեպի Սև ծով իրենց մուտքը ապահովելու առմամբ, նրանք՝ որպես լրացում, իրենց իրավունք վերապահեցին ռազմագրավել Դարդանեղի և Բոսֆորի ամրոցները»: Թուրքահայաստանը չէր գտնվում դեպի Ռուսաստան տանող ջրուղիների ճանապարհին: Այդ հիմնական թուլությունը Մուրթուսի զինադադարի ժամանակ արագ խոստովանեցին Հայաստանի կողմնակիցները: Պաշլամենտի անդամները բարձրաձայն կոչ էին անում Թուրքահայաստանում օսմանյան անհապաղ ու լրիվ գործարարության օգտին ու նույնիսկ այդ տարածքի ռազմագրավման օգտին, եթե դա անհրաժեշտ լինի տվյալ նպատակին հասնելու համար: 1918 թ. հոկտեմբերի 31-ին, երբ զինադադարն ուժի մեջ մտավ, Քլիվլենդ Դ.Դոջը և Առաքելությունների ամերիկյան վարչության երկու ծառայողներ՝ Վիլյամ Վ.Պիտը ու Ջեյմս Լ.Բարտոնը միջնորդագրով դիմեցին Պետական դեպարտամենտ, որ նա հնարավորության սահմաններում ամեն ինչ անի օսմանյան բանակին Թուրքահայաստանից ու Տրասպիզոնից հեռացնելու ուղղությամբ: Նույն օրը հայ դեսպանորդ Գարեգին Պաստրմա-ճյանը, Ամերիկայի հայոց ազգային միության անդամ Միհրան Սվազյանի հետ պետական քարտուղար Լանսինգին ներկայացրին նմանօրինակ կոչ՝ պահանջելով, որ Թուրքահայաստանում հաստատվի միջդաշնակցային վար-

չակազմ: Սակայն ի դժբախտություն հայերի, Դաշնակից երկրների ժողովուրդները պահանջեցին ոչ թե ընդլայնել միջամտությունը, այլ խիստ կրճատել կամ նույնիսկ հրաժարվել արտասահմանյան պարտավորություններից:

Հենց որ Փարիզում ստացան զինադադարի թուրքական խախտումների մասին հաշվետվությունները, Ահարոնյանն ու Նուբարը, որոնք աշխատում էին համաձայնությամբ որպես միասնական Հայաստանի պատվիրակություն, սկսեցին խնդրել Դաշնակիցներին ռազմագրավել Թուրքահայաստանը, կամ առնվազն նրանց օգնել ու ղեկավարել, որ դա կարողանա անել հայոց բա- նակը: Հաղթական բոլոր տերություններից միայն Մեծ Բրիտանիան էր, որ նկատելի ուժեր ուներ Մերձավոր Արևելքում ու Կովկասում, սակայն ռա- զմական նախարարությունը դրանք համարում էր վտանգավոր աստիճանի ձգված ու ցրված: Կայսերական գլխավոր շտաբի պետ սեր Հենրի Վիլսոնը հույս ուներ նույնիսկ գեներալ Միլնին դուրս բերել «խիստ վատնողական վիճակից», որն ստեղծվել էր Սև ծովի ավազանում: Նրա կենսագրի, կամ գուցե ավելի ճիշտ, սրբանկարչի վկայությամբ, «սեր Հենրին մեծապես շնորհակալ էր այն գերագանց աշխատակից, որը մեր գործնասերը կատարեցին աշխարհի այդ հեռավոր մասում, սակայն նա լավ էր հասկանում, որ մենք չունենք ռազմական ուժեր, որոնք հարկավորոյ էին՝ ոստիկանական աշխատանք ստան- ձնելու համար այն տարածքներում, որոնցում կայսրությունը կենսականորեն շահագրգռված չէր»: Թեև գեներալ Վիլսոնը արհամարում էր «պարեգոտների» (բանկոններ հագած քաղաքացիական անձանց, որոնք կանխորոշում էին բրիտանական ու Դաշնակիցների քաղաքականությունն, կամ էր «պտտվում էին» Փարիզի հաշտության կոնֆերանսի շուրջ), այդուհանդերձ, նա հիմնա- վորում էր, որ վարչապետ Լյոյդ Ջորջն և արտգործնախարար Բալֆորը մեծապես համամիտ էին՝ Կ.Պոլսում, Սիրիայում և Անդրկովկասում իր ռազմա- կան պարտականություններից Մեծ Բրիտանիային զրկելու ցանկությամբ:³³

Հունվարի 30-ին Լյոյդ Ջորջը հայտարարեց 10-ի Խորհրդում (Դաշ- նակիցների բարձրագույն մարմնում), որ Մեծ Բրիտանիայից չպետք է ա- կրնկալել, որ նա կշարունակի իր ուսերին կրել ռազմական պատա- խանատվությունը Մերձավոր Արևելքում, «հատկապես, եթե նա նվազագույն իսկ մտադրություն չունի լինելու ներկայումս իր կողմից ռազմագրավված այնպիսի տարածքների մանդատավոր, ինչպիսիք են Սիրիան ու Հայաստանի մի մասը (Կիլիկիա)»: Նույնը, ասաց նա, վերաբերում է նաև Կովկասի հետ առնչվող հարցին: 10-ի Խորհրդի ձեռնարկած միակ գործողությունը՝ այդ օրը Գերագույն ռազմական խորհրդի ներկայացուցիչներին արձակված հրահանգն էր՝ ուսումնասիրել, ու քաղաքացիական ղեկավարության հաջորդ նիստում զեկուցել «թուրքական կայսրությունում և Անդրկովկասում կարգուկանոն հա- ստատելու նպատակով ռազմական ուժերի մատակարարման բեռը այդ Տե- րությունների միջև առավել արդարացի և խնայողաբար բաշխելու» մասին:³⁴

Ձինվորական ներկայացուցիչները ամենայն ակներևությամբ գիտակներ չէին, որպեսզի մեկնաբանեին քաղաքագետներին առնչվող ընթացակարգերը, ուստի և նրանք 10-ի Խորհրդի վրդովմունքը հարուցեցին, առաջադրելով մի շարք հարցեր, որոնց փորձագետները իրենք պետք է լինեին: Ու վերջապես զինվորական ներկայացուցիչները փետրվարի 10-ին ներկայացրին մի զեկու- ցագիր. նրանք ոչ միայն առաջարկեցին զգալիորեն կրճատել Դաշնակից զորքերի թիվը Օսմանյան կայսրությունում ու Կովկասում, այլև թվարկեցին, թե ինչպիսի երկրներ պետք է դասվեն ռազմագրավման կոնկրետ գոտիներին: Իտալիան անվանվեց Մեծ

Բրիտանիայի հաջորդը Կովկասում ու Փոքր Ա- սիայում՝ Կոնիայում, Ֆրանսիան պետք է վերահսկեր Սիրիան ու Կիլիկիան, իսկ Մեծ Բրիտանիան պետք է ռազմագրավեր Պաղեստինն ու Միջագետքը՝ ներառյալ Մոսուլը: 10-ի Խորհուրդը արդեն անհանգստացել էր, որ զին- վորական ներկայացուցիչները ներխուժել են իր իրավասությունների ասպա- րեզը, որոշեց, որ այդ առաջարկությունները, ըստ էության, քաղաքական են, հետևաբար, բացառապես Հաշտության կոնֆերանսի վճիռների են ենթակա: Ու թեև հաջորդ օրը տվյալ հարցը դրվեց քննարկման, իրականում դա գրեթե երեք ամսվա ընթացքում վերջին դեպքն էր, երբ այդ խնդիրը պաշտոնական նիստի առարկա էր: Ակնհայտորեն, որ Մեծ Բրիտանիայի պահանջով փետրվարի 11-ին արևելյան թեման հանվեց օրակարգից:

Մինչդեռ փետրվարի 8-ին ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը, ի պատասխան Դաշնակցների ճնշմանը, որ Ամերիկյան մասնակցի Մերձավոր Արևելքում «կայագրոների տեղաբաշխմանը», հեռագրեց ռազմական նախարար Նյուտոնը դը Բեյքերին, նրան խնդրելով օրինականության ուժ տալ գործառնաբեր Թու- րքիա ուղարկելուն, հաշվի առնելով այն փաստը, որ Միացյալ Նահանգները Օսմանյան կայսրությանն հիմա էլ պատերազմ չի հայտարարի: Վիլսոնը նպաստեց նման հռչակագրի կանխմանը, բայց հիմա նա հուսով էր, որ գուցե հնարավոր լինի գործառնաբեր տեղաբաշխել Կ.Պոլսում ու Հայաստանում՝ ելնելով այդ շրջաններում ամերիկյան շահերի առկայությունից: Երեք օր հետո Բեյքերը խիստ նախագգուշացրեց այդ քայլի դեմ, որովհետև թեև այդ գոր- ծողությունները կարող էին թույլատրելի լինել տեխնիկական առումով, այնու- հանդերձ, երեխաներին տուն վերադարձնելու հասարակության խիստ պա- հանջներն էլ ավելի սաստկանում էին:

Ապարդյուն փորձելով հասնել արևելյան վիլայեթներից թուրքական բանակների վտարմանը, Ահարոնյանն ու Նուբարը «ճամփորդում էին» Օթել դը Քրիոնի՝ հաշտության բանակցությունների ամերիկյան հանձնաժողովի նստավայրի, և «Աստորիա» հյուրանոցի՝ Բրիտանական կայսրության պատ- վիրակության նստավայրի միջև: Միացյալ Նահանգներն ու Մեծ Բրիտանիան սրտանց հավանություն էին տալիս միմյանց ռազմական համաձայնության համար: Այդ փոխադարձ գովասանքը մարմնավորում ստացավ մարտի 3-ին, երբ սեր Վիլյամ Ջ.Վայզմենը՝ ամերիկյան գործերով բրիտանական գլխավոր խորհրդականը, դիմեց արտասահմանյան հայտնի թղթակից, գնդապետ Սթիվեն Բոնգալին, որը Վիլսոնի մոտ քարտուղար էր ծառայում, խնդրելով պարզել, թե նախագահը ի՞նչ մտադրություններ կարող է ունենալ Հայաստանի նկատմամբ: Բոնգալը նենգորեն պատասխանեց, որ գուցե գործադիր իշ- խանության դեկավարը առհասարակ ոչ մի մտադրություն չի ունեցել: Բոնգալը ակնհայտ գոհունակությամբ իր քաղաքական օրագրում նշեց, որ երբ Վայզմենը, ինչպես որ սպասվում էր, կարմանք արտահայտեց այդ պատասխանի առթիվ, «ես ցույց տվեցի վարչապետի՝ 1916 թ. Գիլդ-Հոլում ունեցած ճառի պատճենը, որը ես չարամիտ նպատակով մի քանի շաբաթ պահում էի աշխատանքային սեղանիս: Քանի որ այն վճռական չէր, ես բարձրաձայն կարդացի. «Բրիտանիան մտադիր է հայերին ազատել թուր- քական լծից, ու վերածնել նրանց կրոնական ու քաղաքական ազատությունը, որին նրանք արժանի են և որից շատ վաղուց են զրկվել»: Բոնգալը շարունակեց թունոտ քննադատումը. «Կարելի է համարել, որ դա ձեր գործն է, և դուք այն ստանձնել եք առնվազն մեր պատերազմի մեջ մտնելուց մեկ տարի առաջ: Իսկ ինչու՞ նախագահը պետք է միջամտի դրան: Չեզնից հետո, պարոնայք անգլիացիներ»:

Վիլյամ Վեստերմանը նույնպես համոզված էր, որ չբախվելով լուրջ դժվարությունների, բրիտանացիները կարող են առնվազն 160-240 կիլոմետր խորությամբ թափանցել Թուրքահայաստան: Նա դրանում վստահություն հայտնեց իր գործընկերներ Ռեյ Ս.Բեյքերին և Իսայա Բոումանին մարտի 26-ին ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ, որին մասնակցեց նաև Ահարոն-յանը:⁴¹

Սկզբում նման ծրագիրը չընդունած Բոումանը, որը հաշտության բանակցությունների ամերիկյան հանձնաժողովի տարածքային հարցերի գծով գլխավոր մասնագետն էր, աստիճանաբար վարազվում էր Վեստերմանի եռանդով, սակայն նա զգուշացնում էր, որ անհրաժեշտ է հաշվի առնել մրցակցությունը եվրոպական տերությունների միջև: Հայերը դարձան այդ խարդավամքների դժբախտ զոհեր: Այնուամենայնիվ, նա կարծում էր, որ բրիտանացիք կարող էին, ու պետք է ռազմագրավելին տարածքը, քանի որ միայն նրանք ունեին անհրաժեշտ մարդկային պաշար, իսկ Միացյալ Նահանգների բանակը Մերձավոր Արևելքում ծառայության համար լիազորություններ չուներ: Համաձայնելով ևս մեկ անգամ քննարկման առարկա հանձնել պետական քարտուղարին ու նախագահին, Բոումանը ու Վեստերմանը Ահարոնյանին խորհուրդ տվեցին խորհրդակցել համապատասխան բրիտանական պաշտոնյաների հետ, որոնց կարելի էր ցանկացած հավաստիացումներ տալ, որ կայսերական գորքերը Թուրքահայաստան ուղարկելու որոշումը կստանար Միացյալ Նահանգների ջերմ աջակցությունը:

Հաջորդ օրը «Աստորիայում» Ահարոնյանն ու Պողոս Նուբարը զրույց ունեցան սեր Լյուիս Մելետի և Առնոլդ Թոյնբիի հետ: Մելետը ոչ մի խոսք չասած ցույց տալու համար, որ բրիտանական զինվորական իշխանությունները ամենայն որոշակիությամբ արդեն բացառել են ռազմագրավման ցանկացած հնարավորությունը, ու նույնիսկ կազմել են Կովկասից 27-րդ դիվիզիայի դուրսբերման ժամկետացանկը: Նա չէր կարող բացատրել ամերիկացիների վերաբերմունքը, որովհետև այն ժամանակ, երբ նրանք գործնական հետաքրքրություն էին ցուցաբերում Հայաստանի մանդատի հանդեպ, նրանք զուգահեռաբար սպասում էին, որ բրիտանացիք պետք է կարգուկանոն հաստատեն այդ երկրում: Մեծ Բրիտանիան ավելի ստորաբաժանումներ չունի, վերջում ասել է Մելետը: Ահարոնյանն ու Նուբարը ստիպված էին վերադառնալ Քրիտոն օթելը: Հրաժարվելով այդքան կտրուկ բացթողնվելուց, Ահարոնյանը դրանից հետո խնդրանք ուղղեց այն պաշարների մասին, որոնց կարիքն ուներ հայկական բանակը, միայնակ ռազմագրավման դիմելու համար: Մելետը խիստ առարկեց, որ այդչափ թեթևամիտ արարքը անշուշտ կհանգեցնեք միջոսայա-կան պատերազմի, և որ հայերը պարզապես պետք է համբերատար լինեն:

Երբ Քրիտոնում ամերիկյան խորհրդականները տեղեկացվեցին այդ մի-ստերի մասին, նրանք խոստացան իրագրել պահել Լանսինգին, իսկ եթե անհրաժեշտ լինի՝ ապա կազմակերպել հայ ներկայացուցիչների հանդիպումը նախագահ Վիլսոնի հետ: Սակայն այդ խոստումը չէր համընկնում Ամերիկայի պաշտոնական քաղաքականությանը: Ռոբերտ Լանսինգը, որը Հայաստանի գործերին Միացյալ Նահանգների միջամտության կրքոտ հակառակորդ էր ու ստրատեգ, որը շատ էր գրգռվում հակադիր հայացքներ արտահայտող անձանց դեմ, նշեց. «Վեստերմանի վերաբերմունքը ցուցադրում է մտքի տկարությունը, երբ անփորձ մարդիկ փորձում են պատկերել կառավարության քաղաքականությունը»: Ստիվեն Բոնգալի՝ օրագրի առանձին նոտերում կա մի տխուր թափանցիկ բնութագիր. «Խեղճ Նուբար, խեղճ Ահարոնյան, դժբախտ հայեր, մեր խոստումները ուժը

կորցրեն են ու նորաստեղծ հայկական պե- տությունը նվազագույն ոչ մի հնարավորություն չունի»:

Այդ ժամանակ Մեծ Բրիտանիան Կովկասը բողոնելու նախապատրաս- տություն էր տեսնում: Փետրվարի վերջին ռազմական նախարարությունը խորհուրդ տվեց՝ զորքերը «անդրկովկասի միջով ուղարկել Իտալիա», և մի քանի օր հետո դահլիճը ընդունեց, որ տարածաշրջանի ռազմագրավման շարունակությունը այլևս հնարավոր չէ: Մարտի վերջին Փարիզի իր ճա- նապարհին սեր Վիլսոնը հանդիպում ունեցավ Իտալիայի շտաբի պետ գեներալ Արմանդո Դիասի հետ, նրանք պայմանավորվեցին, որ «Անդրկովկասի ներ- սում ու նրա շուրջ» իտալական բանակը պետք է փոխարինի Միլնի զինված ուժերին: Ջորամասերը տուն վերադարձնելու համար ուժեղ ճնշման պայ- մաններում Լլոյդ Ջորջը պաշտպանում էր այդ գործողությունները, թեև գտնում էր, որ դրանք այնքան էլ լրիվ չեն համընկնում տեղի բնակչության ցանկու- թյանը, Ռուսաստանի կամավորական բանակի և Միացյալ Նահանգների նախագահի ցանկությանը: Ապրիլին Իտալիայի կառավարությունը գնդապետ Մելքիորե Գաբբայի գլխավորությամբ զինվորական առաքելություն ուղարկեց, Կովկասում հետախուզություն կատարելու համար, սակայն դա միաժամանակ բարդացրեց գործերը, մերկացնելով Արևելյան Ադրիատիկայի և Փոքր Ասիայի նկատմամբ կայսերամետտական մտահղացումները: Իտալիայի վարչապետ Օռլանդոն հակված էր այն բանին, որ չնայած մյուս տերությունների պա- տկառելի դիմակայությանը, նրա երկիրը կսկսեր պաշտպանել իր «հիմնա- վորված իրավունքները», որոնք, պնդում էր ինքը, երաշխավորված էին Դա- շնակիցների կողմից ստորագրած ռազմական ժամանակի գաղտնի համաձայ- նագրերով:

Հենց այն ճգնաժամը, որն արագացավ Թուրքիայի Միջերկրական ծո- վափում իտալական զորքի ափհանումով, ինչպես և այն հաղորդագրու- յուններով, որ մի քանի ռազմանավեր մոտեցել են Չմյուռնիայի ափին, Հա- շտության կոնֆերանսին ստիպեց մեկ անգամ ևս անդրադառնալ Օսմանյան կայսրության մասերի ռազմագրավման հետաձգված հարցին: Մայիսի 5-ին, դժգոհելով նիստերի իտալական միտումնավոր բացակայությունից, Լլոյդ Ջորջը ընդգծեց, որ ռազմագրավման գոտիների բաշխումը կժառայեր ամբողջ Անատոլիան կուլ տալու իտալական ծրագրի կանխատեսմանը: Նա առա- ջարկեց, որ Միացյալ Նահանգների իր գորամասերը ուղարկի Կ.Պոլիս ու Հայաստան, որ Կովկասից բրիտանական զորքերի դուրսբերման ժամանակ լինեին պիտանի գորամիավորումներ՝ Փոքր Ասիայում ու Բուլղարիայում ի- տալացիների հնարավոր քայլերին հակազդելու համար, որ ֆրանսիացիները զորքեր մտցնեն Սիրիա, իսկ հույները լիազորվեն ռազմագրավել Չմյուռնիան, «քանի որ նրանց հայրենակիցները, փաստորեն, ներկայումս կոտորածի գոհ են դարձել, և այնտեղ ոչ ոք չկա, որ օգնի նրանց»: Լլոյդ Ջորջը առաջարկեց այդ որոշումը ընդունել արագ, մինչև իտալական պատվիրակության վերադարձը, սակայն նախագահ Վիլսոնը ստիպված էր ճնշել իրավիճակից այդպիսի ելքը, քանի որ «նա չգիտեր, թե որտեղ պետք է գտնի ամերիկյան զորամասեր»: Ինքը ենթադրում էր, որ Դաշնակիցների գլխավոր հրամանատար գեներալ Ֆեր- դինանդ Ֆոշը իրեն անհարմար կզգար, եթե ամերիկյան զորամասերը փոխադրվեին Գերմանիայի ռազմագրավման գոտուց, և ավելին, ծրագրվող գործողության բնույթի պատճառով «բրիտանական զորամասերը միակն էին, որ ընտելացել էին մմանօրինակ վարվելակերպին»: Ոչ նախագահ Վիլսոնին, ոչ էլ Կլեմանտյին գոհունակություն չպատճառեց գեներալ Հենրի Վիլսոնի հայտարարությունը,

որ նախորդ համաձայնագրի համապատասխան, իտա- լացիները պետք է Կովկասում գրավեն բրիտանացիների տեղը, կամ հենց Լլոյդ Ջորջի հիշեցումը, որ այն ժամանակ, երբ իտալական զավթումը «դժոխք» կստեղծի տվյալ տարածաշրջանում, ոչ մի այլ կառավարություն չէր ցանկանա կամովին ստանձնել նշված պարտավորությունները: Միացյալ Նահանգները, ասած նա, Հայաստանի պաշտպանության համար տրամաբանական տե- րություն կլիներ, քանի որ այդ երկրում մարդիկ երախտագիտությամբ կողջունեին նման քայլը: Սեր Հենրի Վիլսոնը նկատեց, որ իր «ազգական» Վուդրո Վիլսոնը սարսափի մեջ է ընկել, երբ նրան ասվել է, որ պահանջվում են մեկ մեծ դիվիզիա Կ.Պոլսի գոտու համար և «ինչ-որ հինգ դիվիզիայի սահմաններում` Հայաստանի համար»: Ծայր աստիճան հիասթափված վի- ճակում նախագահը դիտորդություն արեց, որ հարցը զգալիորեն ավելի կարևոր է, դրանում շտապ կողմնորոշվելու համար: Նա կցանկանար խորհրդակցել իր ռազմական մասնագետների հետ: Ուստի ինքը դիմեց խնդրանքով, որ գեներալ Վիլսոնը նույնպես գրույց անցկացնի գեներալ Տասկեր Գ.Բլիսի, և ամերիկյան պատվիրակությունից ծովակալ Վիլյամ Ս.Բենսոնի հետ:

Բլիսի և Բենսոնի հետ հանդիպումից հետո, Վիլսոնը գրառում կատարեց, որ այդ երկու այրն էլ համաձայն են, որ «Կոնգրեսը չի քննարկի Ամերիկայի` Կոստանդնուպոլիս ու Հայաստան մտնելու գաղափարը, և նրանք ասել են, որ իր ազգականը կճնշվեր այդպիսի առաջարկություն ծագելու ժամանակ»: Եվ իրոք, մայիսի 6-ի միտի ընթացքում նախագահ Վիլսոնը «ցավոք պետք է ասեր, որ իր իրավաբանական խորհրդականները նրան տեղեկացրել են. ինքը լիազորություններ չունի բանակի ստորաբաժանումներ, Թուրքիա ուղարկելու համար»: Նա ամեն ինչ արեց ուժերի հնարավորության սահմաններում, սակայն օրենքը ճշգրիտ էր, Միացյալ Նահանգների սահմաններից դուրս գործառնալի օգտագործումը կարգավորելու նկատմամբ: Նա հաճույքով կպաշտպաներ նրան այդպիսի իշխանություն շնորհելու օրենքը, երբ ինքը Գերմանիայի հետ հաշտության պայմանագիրը վավերացման համար կներկայացնի Կոնգրեսին: Ազգերի Լիգա հիմնելու մասին հողվածը մտցված էր այդ պայմանագրում, ու նախագահը անկեղծ ցանկություն ուներ, որ Միացյալ Նահանգները Լիգայի հովանավորությամբ կարողանային օգնել ամբողջ Մերձավոր Արևելքին, ու մասնավորապես Հայաստանին:

Փարիզում Լլոյդ Ջորջի, Վիլսոնի և Կլեմանտյի խաղացած դիվա- նագիտական խաղը անհաջողություն կրեց Թուրքահայաստանի ռազմա- գրավումը իրականացնելու գործում, սակայն այն իսկապես հանգեցրեց մի որոշման, որը Հայաստանի համար հղի էր լուրջ հետևանքներով: Համա- շխարհային երեք առաջնորդները համաձայնեցին, որ բրիտանական, ֆրանսիական և ամերիկյան ռազմաճակատները պետք է ուղարկել Չմյուռնիան ողողող ջրեր, որտեղ անապատելիորեն հայտնաբերվել է իտալական ռազ- մական նավատորմի, և որ Չմյուռնիայում ավի կհանվի հունական ռազմարշավը, որպեսզի պաշտպանի այն քրիստոնյա բնակչությանը, որը նպատակալաց կերպով ենթարկվում էր վերսկսված թուրքական գազա- նություններին: Հունական բանակի ստորաբաժանումների ավիհանումը մայիսի 14-ի լույս 15-ի գիշերը հանգեց դրան, որ ջախջախված թուրքերի մեջ վերականգվեց ազգայնականությունն, ու ամբողջ հետպատերազմյան իրա- վիճակը Մերձավոր Արևելքում շրջվեց հակադիր ուղղությամբ, իսկ Հայաս- տանը անուղղակի կերպով ներքաշվեց ավերածության հորձանուտի մեջ:

Այն ժամանակ հազիվ թե կարելի էր կանխատեսել նման հեռանկարը, այնուամենայնիվ հայ հռետորները պարզորոշ ընդունում էին վտանգը իրենց գործի համար, և աղաչում էին համենայնդեպս Դաշնակիցների ներխուժման պատրանք ստեղծել, որ խանգարեն թուրքերի այն «գաղտնի գաղափարի» իրականացմանը, որի էությունը Հայաստանի վերականգման խոչընդոտելն էր՝ որպես նախադրյալ վերջին հաշվով պանթուրքական կայսրություն ստեղծելու համար: «Ձորաբաժինը, որքան էլ այն սահմանափակ լիներ, բավարար կլինի, - բացականչել է Նուբարը, - որովհետև Դաշնակիցների դրոշների այդ նոսրաբնակ տարածաշրջանում ներկայումս երևան գալը, ինչպես համոզված ենք, կկանխեր հետագա այն դժբախտությունը, որոնցից ձեր կառավարությունը ցանկանում է մեզ պաշտպանել»: 1919 թ. կեսերին արդեն գրեթե ընդունվում էր, որ նման տխուր հաջորդականությամբ ներկայացվող հուշագրերի շարքը ոգեշնչող արձագանքի չի արժանանա: Հունիսի 2-ին, երբ հայկական պատվիրակության առաջ փակվեցին դռները, Ավետիս Ահարոն-յանը ևս մեկ անգամ կոչ արեց նախագահ Վիլսոնին, հայցելով գեթ «միջոցների, հայկական բանակի հանդերձավորման ու վարժեցման համար»: Ի պատասխան, նախագահը Լանսինգին հանձնարարեց հաղորդել հայ պատգամավորներին, որ տվյալ պահին բոլորովին հնարավոր չէ բավարարել այդ դիմումը:

Մեջբերումներ

23) Մարկ Լեմբերտ Բրիստոլը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ զբաղեցրել է մի շարք հրամանատարական պաշտոններ, իսկ 1918 թ. հուլիսին ժամանակավորապես նշանակվել էր դերժովակալ: 1919 թ. հունվարի 8-ին ռազմածովային դեպարտամենտը Բրիստոլին հրամայեց մեկնել Կ.Պոլիս, որպես Միջերկրական ծովի արևելյան թևի Միացյալ Նահանգների ռազմածովային ուժերի հրամանատար (նշվում էր նաև որպես թուրքական ջրերում Միացյալ Նահանգների նավերի ռազմածովային ջոկատ): Հունվարի 28-ին Բրիստոլը իր դրոշը բարձրացրեց «Սկորպիոնի» հրամանատարի նավի վրա, որը օսմանյան կառավարությունը ներկալել էր 1917 թ. ապրիլին, թուրք-ամերիկյան հարաբերությունների խզվելուց հետո: 1919 թ. մայիսին հաշտութան բանակցությունների ամերիկյան հանձնաժողովը Բրիստոլին նշանակել էր «Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների ժամանակավոր գլխավոր քաղաքական պաշտոնատար անձ», այդպիսով նրան վեր դասելով գլխավոր հյուպատոս Գ.Բայ Ռավնոլդից, որն ակնհայտորեն հավանություն չէր տալիս Բրիստոլի վարչական քաղաքականությանը: 1919 թ. օգոստոսի 12-ին Բրիստոլը նշանակվեց Կ.Պոլսում Միացյալ Նահանգների գլխավոր կոմիսար: Այդ պաշտոնը նա զբաղեցրեց մինչև 1927 թ. հունիսի 25-ը... Բրիստոլը Հայաստանի մանդատի հարցում ամերիկյան միջամտության ու հայկական ձգտումների բացահայտ հակառակորդ էր: Պետական դեպարտամենտի ու Կոնգրեսի բարձրաստիճան անձանց հղած իր հերացրերում և անձնական մամուլներում նա ավելի, քան որևէ այլ ամերիկյան պաշտոնյա Մերձավոր Արևելքում, ազդեց այն որոշումների վրա, որոնք կործանարար էին հայկական շահերի տեսակետից: Բրիստոլը էական ազդեցություն գործեց նաև թուրք-ամերիկյան դիվանագիտական ու տնտեսական հարաբերությունների վերականգման ու բարվոքելու գործում: Թուրքիայում ներկայումս մի քանի փողոցներ, հրապարակներ, դպրոցներ և այլ հիմնարկներ կրում են նրա անունը: Ծովակալ Բրիստոլի ծավալուն թղթերը,

որոնք դասավորված են 161 տուփերում, ներկայումս գտնվում են Կոնգրեսի գրադարանի, ձեռագրերի բաժանմունքում: Դրանք աղբյուրագիտական արժեքավոր նյութ են առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում ամերիկա-կա-թուրքական և ամերիկա-հայկական հարաբերությունների վերաբերյալ:

24) ...Բրիտտորը հաճախ էր քննադատում այն «տեսաբաններին ու զգայուն անձանց», որոնք չափից դուրս ուշադրություն էին նվիրում հայերին՝ մի ժողովրդի, որը չուներ «ցուցադրման համար պիտանի անցյալի պատմություն, որ նրանք ընդունակ չեն ինքնավարության, կամ կառավարման որևէ մեկի կողմից»: Նրա այն գնահատականը, որ անհապաղ հայրենադարձության մասին հայերի աղաչանքները ոչ այլ ինչ էին, քան ստոր քաղաքական խո-տորում, հստակորեն ձևակերպված է հետևյալ բնորոշ հեռագրում.

«Հայաստանի Հանրապետության գործող նախագահի (Խատիսյանի) հետ տևական խորհրդակցության ժամանակ բացահայտվեցին որոշ փաստեր: Դրանցից մեկն այն էր, որ ռուսահայերը խիստ ցանկանում են, որ թուրքա- հայերը, որոնք այժմ գաղթականներ են իրենց երկրում, հայրենադարձվեն Թուրքիա և դրա գլխավոր պատճառն այն է, որ եթե նրանք չհայրենադարձվեն, ապա հայերը կորցնում են վերահսկողությունը, այսպես կոչված, Թուրքա- հայաստանի նկատմամբ: Ակնհայտ է նաև, որ Հայաստանի Հանրապե- տության նախագահը գլխավորապես, եթե ոչ բացառապես, մտածում է ավելի շուտ քաղաքական իրավիճակի, քան մարդկանց տառապանքների ու սովա- հարության մասին՝ ոչ միայն ռուսահայերի, այլև իր երկրի թուրքահայ գաղ- թականների: Ի պատասխան հարցի, նա փաստորեն հայտարարեց, որ եթե թուրքահայերի բռնի հայրենադարձությունը անկարգություններ առաջացնի, ապա դա նվազ հետաքրքրություն է ներկայացնում, քան հայերի քաղաքական ձգտումները...»:

33) 1918 թ. դեկտեմբերին, իր քննարկումների ընթացքում պատերազ- մական դահլիճի արևելյան կոմիտեն փորձեց սահմանել Կովկասում կայսե- րական գործառնների պահպանման նկատմամբ առկա քաղաքականությունը: Լորդ Քերզոնը համոզում էր, որ Բրիտանիան «Անդրկովկասի նկատմամբ ի- րականացնի քաղաքական վերահսկողության որոշ միջոցներ», որ Բաթումն ու Բաթուն միջազգայնացվեն, իսկ Կովկասի արևմտյան և արևելյան ծայրա- կետեր միացնող երկաթուղին հանձնվի բրիտանական վերահսկողությանը, և որ [այնտեղ] անկախություն ստացած հանրապետությունները պաշտպանվեն, որ Կովկասում խոչընդոտվի ռուսաստանյան կառավարման վերադարձը: Քերզոնի հայտարարությունները առարկություններ հարուցեցին արևելյան կոմիտեի նրա գործընկերների, հատկապես Հնդկաստանի գործերով նախարար Մոնտեգյուի և արտաքին գործերի նախարար Բալֆորի կողմից: Մոնտեգյուն այն կարծիքին էր, որ կայսերական իշխանության սփռումը այնպիսի, կենսականորեն ոչ կարևոր տարածաշրջանում, ինչպիսին Կովկասն է, կլիներ անխելամիտ քա- ջություն այն ժամանակ, երբ՝ Բալֆորի առարկությամբ, նրա հետ չեն խոր- հրդակցել 27-րդ դիվզիա Բաթում ուղարկելու մասին: Հնդկաստանի գործերով նախարարը ավելացրեց, որ եթե Ռուսաստանը ի վիճակի լիներ կրանել Կովկասը, ապա «ինչու՞ ոչ»: Մյուս անգամ բրիտանական գունդերը Կովկասում թողնելու կամ դուրս բերելու հարցը քննարկման ընթացքում Քերզոնը բացականչեց. «Դուք չեք կարող դրանք դուրս բերել ու նրանց բոլորին հնարավորություն տալ իրար վիզ կտրել»: Ի պատասխան դրա,

Մնտեգլուն նորից ասած. «Ինչու՞ ոչ»: Արթուր Բալֆուրը համամիտ էր այդ տեսակետին. «Ես ինձ իրավունք եմ վերապահում պարոն Մոնտեգլուի հետ ասելու, ...որ եթե նրանք ուզում են իրենց վիզ կտրել, ապա մենք ինչու՞ հնարավորություն չենք տալիս նրանց անել այդ ամենը: ...Որքան հասկանում եմ, չէ՞ որ մենք մեր [հնդկական] սահմանից դուրս հյուսիս-արևմտյան սահմանամերձ շրջաններում հնարավորություն ենք տալիս տեղի ցեղերին իրար վիզ կտրել՝ չափավոր սահմաններում»:

Երբ հարցը ներկայացվեց կայսերական պատերազմական դահլիճին, որի մեջ մտնում էին բրիտանական պատերազմական դահլիճն, ինչպես և դո- մինիոնների և Հնդկաստանի ներկայացուցիչները, ընդունվեց ինչ-որ անորոշ միջանկյալ որոշում, ըստ որի «բրիտանական զինված ուժերը չպետք է Կով- կասից դուրս բերվեն այնքան ժամանակ, քանի դեռ դուրս չեն բերվել թուրքական ու գերմանական զորքերը, որ բրիտանական երկրորդ դիվիզիան չպետք է Կովկաս ուղարկվի առանց դահլիճի կարգադրության, և որ բրիտանական զինված ուժերը չպետք է այնտեղ ավելի երկար պահպանվեն, քանի որ դրանից կարելի է խուսափել...»:

34) «...Եվ Անդրկովկասում» բառերը կարգադրությունում ավելացվել են հունվարի 31-ին, ու մտցված են 1919 թ. փետրվարի 1-ի լրացուցիչ արձանագրություններում: Ավելի վաղ՝ հունվարի 28-ին, Լլոյդ Ջորջը արեց հետևյալ հայտարարություն, որը մտցվեց նիստի արձանագրություններում. «Ներկա- յումս Մեծ Բրիտանիան ռազմագրավում է տարածքներ, որտեղ ինքը մտադիր չէ մնալ, նույնիսկ եթե Ազգերի Լիգան խնդրի նրան այդ մասին: Այսպես, օրինակ, բրիտանական զորամասերը ռազմագրավում են Ռուսաստանի ստանն ու Մերքիան, նրանք չէին ուզում այնտեղ հայտնվել, սակայն ինչ-որ մեկը պետք է հայտնվի նաև այնտեղ: Արդյո՞ք Մեծ Բրիտանիան այնտեղ ստիպված է պահպանել իր զորամասերը այնքան ժամանակ, մինչև որ Ազգերի Լիգան չանհանգստանա այդ մասին: Պարզվեց, որ այդ զորամասերը ներկայումս կազմում են մեծ ուժ. միայն Սիրիայում, Կովկասում, Արևելյան Աֆրիկայում և ուրիշ հեռավոր վայրերում բրիտանական զորամասերում գտնվում է ավելի քան 170 հազար մարդ: Վաղ թե ուշ այդ զորամասերը պետք է դուրս բերվեն, բայց նրանք չեն կարող դա անել, չիմանալով, թե ով կզբաղվի նրանց տեղը: Նրանք չեն կարող հեռանալ ու մարդկանց թողնել, որ իրար վիզ կտրեն»: ...

41) «Բեյքերն ավելի ուշ գրել է հայ ներկայացուցիչների մասին. «Համարյա ոչ մի օր չէր անցնում առանց այն բանի, որ մորուքավոր ու սզո հագուստներով վշտահար հայերը չպաշարեին ամերիկյան պատվիրակությանը, կամ հազվադեպ՝ մեր նախագահին. շարադրելով իրենց հափշտակված հողի իրոք ահավոր վիճակը»:

Survivors



BEDROS BAHADOURIAN

born 1903, Gurun

When the massacres began, I was 12 years old. I remember, they first took all the men of our village and kill them. The rest of us were deported. I don't know how many hundreds we were. Everyone according to his ability rented a donkey or a horse and we left.

We went from Albistan to Zeitun to Marash to Aintab. We camped on a farm behind Aintab College, near some newly dug foundations for houses. They were simply large holes in the ground. You understand? An epidemic had broken out in our caravan and people were dying all around us. They started filling those foundations with dead bodies. Two, three, four, five bodies on top of each other.

From Aintab, orders came that everyone over the age of 12 was to be sent to Deir-El-Zor. A friend of mine and I escaped, but we were caught later and this time they sent us to Bizib then toward Biredjig. Biredjig is on the shores of the Euphrates. You understand? It is on the other side of the river. We stayed in a khan (an inn) on this side. Caravans would come through there and be sent off toward the desert; hundreds and hundreds of Armenians. We used to see dead, bloated bodies floating in the river.